



**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԵՄՋԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 7/2
ՇԵՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԶԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԶԵՌՆԱՐԿ**





«Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ. «Կանաչ էներգիան հանուն «կանաչ» սոցիալ-տնտեսական զարգացման. Հայաստանի Շիրակի մարզում վերականգնվող էներգիայի բազմագործառույթ համակարգերի և «կանաչ» եկամտի աղբյուրների խթանում՝ մեղմելու գյուղական բնակչության և գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական դժվարությունները» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հիլսֆերկ Ավստրիա Ինթերնեյշնլի և հայկական ՀԿ-ների՝ «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի, «Բիոսոֆիա», «Ֆերտի» բարեգործական կենտրոն» և «Երրորդ բնություն» հետ համագործակցությամբ:»



Բովանդակություն

1. Ներածություն.....	4
2. Կատարված ջերմամեկուսացման աշխատանքներ.....	5
2.1 Դռներ և պատուհաններ.....	5
2.2 Տանիք.....	7
2.3 Արտաքին պատեր.....	8
3. Լուսավորություն.....	9



1. Ներածություն

Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքում կատարվել է շենքի վերանորոգում՝ հաշվի առնելով էներգետիկ կորուստները:

Շենքերի ջերմամեկուսացման խնդիրն է տարվա ցուրտ ժամանակաշրջանում փոքրացնել ջերմության կորուստները և արտաքին օդի ջերմաստիճանի տատանումների դեպքում օրվա ընթացքում սենյակներում ապահովել հարաբերական կայուն ջերմաստիճան: Ջերմամեկուսացման համար կիրառելով արդյունավետ ջերմամեկուսիչ նյութեր՝ հնարավոր է էականորեն փոքրացնել պատող կոնստրուկցիաների հաստությունն ու նվազեցնել դրանց զանգվածը՝ և այդպիսով պակասեցնելով հիմնական շինանյութերի ու էներգակիրների ծախսը:

Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությունը խիստ ցածր է լինում շենքի տարբեր մասերից, հատկապես շքամուտքերից, աստիճանավանդակների դռներից, պատուհաններից, առաստաղներից տեղի ունեցող մեծ քանակի ջերմության կորստի պատճառով: Արդյունքում տեղի է ունենում վառելիքի, հատկապես, բնական գազի անտեղի շռայլումներ, որը մի կողմից բացասաբար է անդրադառնում բնակչության առանց այն էլ վատ սոցիալական պայմանների վրա, մյուս կողմից թողնում է իր բացասական էկոլոգիական ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա:



2. Կատարված ջերմամեկուսացման աշխատանքներ

Պենզաշենի ցուցադրական շենքում (24 բնակարան, 92 բնակիչ) տեղադրվել են էներգաարդյունավետ դռներ, պատուհաններ, կառուցվել են նախամուտքեր, իրականացվել է LED լամպերի տեղադրում:



2.1 Դռներ և պատուհաններ

Մուտքերից կորում է ջերմային էներգիայի 15 %-ը, դրա համար շքամուտքում տեղադրվել են ջերմային կամուրջով կրկնակի դռներ:



Փոխվել են շքամուտքի պատուհանները, այստեղ կորուստները 10 % են:



2.2 Տանիք

Տանիքով դուրս է գալիս 25 % ջերմային էներգիա, դրա համար կատարվել է տանիքի ջերմամեկուսացում հանքային բամբակի կրկնակի շերտով:



2.3 Արտաքին պատեր

Ջերմության զգալի մասը՝ 35% դուրս է գալիս արտաքին պատերից, դրա համար նախամուտքի արտաքին պատերին կատարվել է ջերմամեկուսացում Յսմ հաստությամբ փրփրապլաստով, որոնք երեսպատվել են գիպսակարտոնի շերտով:



Տանիքի ջերմամեկուսացումը կատարվել է երկշերտ հանքային բամբակի միջոցով:



3. Լուսավորություն

Շենքի շքամուտքի լուսավորության համար տեղադրվել են էներգախնայող լամպեր և շարժման տվիչներ:





Ծրագրի իրականացման արդյունքում 92 բնակիչ-շահառուները տարեկան կտնտեսեն մոտ 7500 կՎտ*ժ ջերմային էներգիա (300,000 դրամ):